բաղմանկիւնի ձևով, այլ այժմ կործանեալ է և տեղին յայդի փոխեալ, որպէս և մեծ մասն մի քաղաքին այգեստան և պարտէզք են. բայց կլիմայն խիստ է 'ի ձմերան և անհամբոյր յամարան (26)։ Ի հիւսիսոյ քաղաքին հանդէպ Կ•Դ Թաղն կայ Կ•ՊԷՌՆ ԲԼՈՒԲ, և 'ի նմա մատուռն և տապան Յովհաննու Կոզբան, և Մովսիսի կաթուղիկոսի նորոգողին ԷՋՄԻԱԾՆԱՅ, և գերեզմանք Հայոց։ — Քանէ՞ գիւղ ժամաւ հեռի 'ի հիւսիսոյ քաղաքին՝ ասի շինեալ 'ի Քամայ և 'ի քեռէ նորա, բնակեալ է 'ի Հայոց, և են անդ աւերակք ինչ։ — Ի Նորէ գեղջ յելից քաղաքին են բրուտք, զի ելանէ անտի կաւ ընտիր։ Ի հիւսիսոյ և յելից սոցա նշանաւոր տեղիք են Արամանա կամ Արամաս և Զաղ գեղք, յորս պայծառ եկեղեցիք շինեցան յԸ դարու, և նշխարք նոցին մնան, նոյնպէս և Զաքաւանդի մենաստանք։

139. Յելից Երևանայ տարածանի դաշտ ցստորոտս լերանց Գեղամայ, յորում բաղում ճակատամարտք մղեալ են. 'ի հարաւոյ կուսէ ձգի դաշտն ցԵրասխ գետ, և 'ի մասին ասա են աւերակք երկուց սնուանի և մեծաց մայրաքաղաքաց Հայոց, Դուինայ և Արտաշատայ։ ԴՈՒԻՆ յելից հարաւոյ կայ Երևանայ իբր հինգ ժամաւ հեռի, 'ի ձախմէ Ազատ գետոյ (Գառնոյ), այժմ գեղ մի անշուք է առ տեղեաւն համանուն քաղաքին մեծի, որոյ աւերակք կան 'ի մոլոր նորա 'ի կաւուտ բլրի, ուր շինեցաւն 'ի խոսրովայ յորդւոյն Տրդատայ, և պարսկական ձայնիւ Դուին կոչեցաւ ըստ պատմչին մերոյ՝ որ է Բլուր, և անուանեցաւ ՈՍՏԱՆ ՀԱՅՈՑ, զի անդ փոխեցան արքունիքն յԱրտաշատայ, և 'ի բարձման Արշակունեաց՝ եղև աթոռ կաթողիկոսին և ամրացուցաւ 'ի Հայոց, որք և շինեցին 'ի նմա եկեղեցի յանուն սրբոյ Լուսաւորչին, զոր հոյակապ ևս կառոյց Սմբատ Բագրատունի առ Մօրկաւ կայսերք. 'ի Զ և յԻ դարու ջորիցս Ժողովք եղեն ուխտի եկեղեցւոյն Հայոց 'ի Դուին. բայց ամրութիւնք քաղաքին քայքայեալք՝ 'ի կայսերացն Յունայ՝ նորոգեցան 'ի բռնանալ Հագարացւոց 'ի Հայս յԸ դարու, և մայրաքաղաք աշխարհին համարեցաւ. անդ նահատակեցան Ս. Դաւիթ Դունեցի և Յիզոիբուզտ։ Բագրատունիք յետոյ ուրեմն զբառամբ ածին զքաղաքն, այլ յելս Թ դարու 'ի մեծէ սասանութենէ կործանեալ և կորուսեալ ոգիս 70,000, խսպառ աւերակ մնայ, և երևին արդ դերբուկք կաւակերտ տանց և պարսպաց։ — Ի մոլոր հարաւոյ Դուինայ մերձ յԵրասխ և յԱզատ գետ կայ ԱՐՏԱՀԱՏ առ Աբգարէ դիւղիւ, որ յառաջ քան զամս 2000 և աւելի, յորժամ շինեցաւն (յԱրտաշիսատայ նախարարէ Հայոց ընդվզելոյ 'ի Սելևկիայեցւոց, թելադրութեամբ գոռ զօրավարին Անթիոքայ Կարքեգոնացւոյ), յերից կողմանց պատեալ լիներ յԱզատ գետոյ և յԵրասխայ, որոյ այժմ փոխեալ է զընթացսն. քանզի յառաջն խաղայր ընդ հիւսիսի և քերէր զքաղաքաւն, և գետն Մեծամօրի յարևմտից Քաստաղաւ հանդերձ ցայս վայր ձգեալ խառներ յԵրասխ. և 'ի վերայ նորա արկեալ էր Տաքերան կամուրջն, ընդ որ գահավիժեալ սպանաւ հայր Լուսաւորչին Անակ՝ սպանիչն խոսրովայ Մեծի. դարս իբրև վեց մայրաքաղաք եղև Հայոց, այլ ոչ յար 'ի նմա նստէին թագաւորք. Կորբուղոն զօրավար Ներոնի կայսեր պաշարեալ էառ զքաղաքս և աւերեաց, և ապա վերըստին շինեալ կոչեցաւ Ներոնիա, նորոգեցաւ յԱրտաշիսէ Բ, յաւելուածով մեհենեաց, զորս քանդեաց Ս. Գրիգոր. Շապուհ Բ և Յազկերտ թագաւորք Պարսից աւերեցին զքաղաքն, այլ Մամիկոնեանք վերըստին նորոգեցին, և անդ առ Վարդանայ խմբեցաւ Ժողովն Արտաշատու. բայց յետ սակաւուց թուի լքեալ տեղւոյն 'ի պայծառանալ Դունայ, և ընդ նմին կործանեալ ստսանութեամբ։ Այժմ հիմնայատակ երևին ընդարձակ փլածքն, համակ աղուսաշէն, հեռք կրկին պարսպաց և միջնաբերդի 'ի հիւսիսոյ կուսէ խրամով զատուցելոյ. 'ի հարաւոյ կողմանէ ամբառնան տասնիւ չափ հողաբլուրք դամբանականք, և բեկորք սափորոց 'ի նոսա, դեղին և կանաչ ապիկով բռածոյ գրուագեալք։ Խրամքն այժմ յածուս բրնձոյ փոխեալք են և հրապարակքն յանդաստանս, և յաւերակացն միջի կայ գեղն Արքաւէր սակաւ տամբք։

Ի հարաւոյ յեղեր Երասխայ կայ Խոր Վիրապ Արտաշատու, ուր զամս երեքտասան տընեցաւ Ս. Գրիգոր, և այժմ մատուռն շինեալ կայ 'ի վերայ դբոյն, որոյ խորութիւն է 25–30'. և շրջապատն անձուկ յոյժ իբրև 15 կամ 20', որմ ածեալ դմբեթաձև 'ի ներքուստ և սեղան փոքրիկ 'ի ներքոյ սեղանոյ մատրանն, յորոյ կողաց են մուտքն կամ էջք 'ի գուբանդր 'ի ներքոյ մատրանն. եկեղեցին հոյակապ շինեալ անդ 'ի Ներսիսէ Գ. բնակիչք լեալ է. առ երի ամբառնայ արդ 'ի գագաթան բլրի 'ի հիւսիսոյ վիրապին 'ի վայելչագիտակ վայրի՝ մենաստան քարաշէն և եկեղեցի մեծ 'ի կարմրագոյն քարանց նորոգ շինեալ 'ի Դաւթէ վարդապետէ յԺԻ դարու. անդ կարծին թաղեալ Ներսէս Գ, և Վարդան Բարձրբերդցի, սակաւք յոյժ են միաբանքն կամ վանականք։ Մերձ նմին 'ի քառաժեռս են երկու գրոշմածք խաչի, զոր ասեն առաքելոցն Բարթողիմեայ և Յուդայի փոբեալ՝ առ յիշատակէ հանդիպմանն իւրեանց անդ։ Յերի Արտաշատայ 'ի մոլոր կուսէ զՀանապարհային կայր Երուանդ մեհեան Տիր դից Հայոց, որ էր (Հերմէս) գպրութեանց խնամարկու և երաշտաբոյց։ — Յարևմտեան սահմանիս և Մասեաց ոտին և Վաղարշապատու դաշտին՝ լինի անուանի Որդանն կարմիր 'ի վերայ սիղոյ մոյ, յորմէ ժողովեալ առաքեն 'ի Ռուսաստան։

140. Իբրև ջրիւք և կիսով ժամաւ հեռի յԵրևանայ 'ի հարաւոյ արևելից նորա, կայ հին քաղաքագեղն Գառնի, պանծալի հնութեամբն և դատատկերիւ մեծի ալբայիին Տրդատայ, յոստ մի հարաւոյ բուն լերին Գեղամայ կամ Գեղայ, որք 'ի ռամկաց Աւլիէի անուանին։ Ահաւոր ընծային կերպարանք վայրացն բուն հրաբղխից զօրութեամբ այլակերպեալք, խորք խոխոմաձիգք և անձաւք քարայրից բացեալ բաղում ուրեք, յորոց միջոյ գնդնչելով 'ի Գեղ լեռնէ բղխեալ ելանէ Ազատ գետ, որ և Գառնոյ վտակ, 'ի բարձանց 4–500 ոտից ընդ ահագին կոշկոռս գահավիժեալ 'ի խորաձորս լեռնահովտաց։ Ոչ այսքան անհարթ էր տեսիլ վայրացն յառաջ քան